ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի շրջանավարտների վերաբերյալ արտաքին շահակիցների կարծիքի ուսումնասիրման հարցման արդյունքների
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

11.07.2015թ.

ՄԿՈԱ բաժինը շրջանավարտների և կարիերայի կենտրոնի հետ համատեղ 2014-15 ուստարում հարցում է անցկացրել 37 արտաքին շահակիցների շրջանում՝ պարզելու նրանց կարծիքը մասնաճյուղի շրջանավարտների վերաբերյալ, նաև իրականացնելու այդ արդյունքների համեմատական վերլուծությունը նախորդ ուստարիների նույն հարցման արդյունքների հետ: Նախ հարկ է նշել, որ այս ուստարում ավելացվել է հարցման մասնակիցների թիվը.

Հարցմանը մասնակցած կազմակերպությունների թիվը	2013	2014	2015
	16	24	37

և նրանց տվյալների համաձայն իրենց կազմակերպություններում աշխատում են մասնաճյուղի 277 շրջանավարտներ, որոնց 65.7%-ը աշխատում է իր մասնագիտությամբ, և նրանց 79.6%-ը աշխատանքի է ընդունվել մրցույթով, այս փաստն իհարկե գոհացուցիչ է, որ մեր շրջանավարտները մրցունակ են աշխատաշուկայում.

Ցուցանիշ	2014		2015	
	Շրջ. Քանակը	%	Շրջ. Քանակը	%
Տարբեր կազմակերպություններում աշխատող ԵՊՀ ԻՄ-ի շրջանավարտներ	109		277	
Նրանցից աշխատում են իրենց մասնագիտությամբ	83	76,15%	182	65,70%
Նրանցից աշխատանքի են ընդունվել մրցույթով	60	72,29%	145	79,67%

Սակայն պարզ է, որ այն պետք է բարելավվի մասնաճյուղի կրթական ծրագրերի արդյունավետ իրականացմամբ:

Արտաքին շահակիցները գնահատել են մեր շրջանավարտների.

- <u>մասնագիտական գիտելիքները և կարողությունները</u>, որի արդյունքները վկայում են, որ նրանք բավարարված չեն մասնաճյուղի շրջանավարտների գործնական հմտություններից և մասնագիտական խոսքից, թեպետ համեմատական արդյունքները նախորդ ուստարիների հետ ունեն որոշակի առաջընթաց.



Այս արդյունքները փաստում են ուսումնառության գործընթացում առկա թերացումների կամ այդ գործընթացի ոչ արդյունավետ իրականացման մասին:

- ինքնազարգացման ձգտումը, որի միջին միավորը 3.89 է, որը թեպետ բարձր է նախորդ ուստարիներ համեմատ, սակայն գոհացուցիչ չէ.



- մասնագիտական և ընդհանրական կարողությունները, որից նույնպես բավարարված չեն: Նրանք բավարարված չեն մասնագիտական գործընթացի նկատմամբ նրանց ստեղծագործական մոտեցումներից (3.86), քննադատական-վերլուծական կարողություններից (3.84), խնդրահարույց հարցեր առաջադրելու և դրանց լուծման արդյունավետ ուղիներ փնտրելու կարողություններից (3.86).

Թիվ	Շրջանավարտների ընդհանրական կարողությունները.	Միջ. գնահ		
		2013թ.	2014թ.	2015թ.
6	ստեղծագործական մոտեցումները մասնագիտական գործընթացում	3,44	3,74	3,86
7	քննադատական - վերլուծական կարողությունները		3,74	3,84
9	խնդրահարույց հարցեր առաջադրելու և դրանց լուծման արդյունավետ ուղիներ փնտրելու կարողությունները		3,52	3,86

- հաղորդակցվելու և կազմակերպչական կարողությունները, որոնք գնահատել են համապատասխանաբար 4.57 և 4.38 միջին միավորներով.



- աշխատանքային կարողությունները, ըստ որոնց արդյունքների մեր շրջանավարտների պատասխանատվությունը աշխատանքի նկատմամբ գոհացուցիչ է (4.43), որ ունեն թիմում աշխատելու ունակություններ (4.33) և գործընկերներին գնահատելու ու

նրանց օգտակար լինելու կարողություններ (4.38): Բոլոր այս չափանիշներով ընթացիկ ուստարվա արդյունները էապես բարձր են նախորդ ուստարիների արդյունքներից.



- վարվեցողության կանոններին և էթիկայի նորմերին հետևելը (4.24).



Այս արդյունքները վկայում են, որ մեր ջրջանավարտների մոտ ուսումնառության ընթացքում ձևավորվել են միջավայրում, թիմում գործելու և վարվելու որոշակի կարողություններ, որը գոհացուցիչ է, սակայն մասնաճյուղը խնդիր ունի նրանց գիտելիքների և գործնական հմտությունների ձևավորման առումով:

Հարցման արդյունքները վկայում են, որ մասնաճյուղի հեղինակությունը տարածաշրջանում (4.57) և հարցմանը մասնակցած կազմակերպություններում (4.38) լավ է և բարձրացել է նախորդ ուստարիների համեմատ: Եվ հարցման մասնակիցների 94.59%-ը խորհուրդ կտա իր մերձավորներին և ընկերներին դիմել ԵՊՀ Իջևանի մասնաճյուղ:

Բաց հարցերով հավաքագրվել է արտաքին շահակիցների կարծիքը աշխատանքային շուկայում մասնաճյուղի շրջանավարտների մրցունակության վերաբերյալ (հիմնականում գնահատել են բավարար):

Նշել են, թե աշխատանքի ընդունելի հատկապես ինչն են կարևորում, նրանք նշել են մասնագիտական գիտելիքները, ստեղծագործական մոտեցումները, կարգապահությունը և մարդկային հատկությունները, տեղեկատվական տեխնոլոգիաների տիրապետելու ունակությունները, սերն ընտրած մասնագիտության նկատմամբ և այլն:

Մասնաճյուղի շրջանավարտների մասնագիտական և մանկավարժական ի՞նչ որակներ կցանկանայիք փոխել հարցին մասնակիցները հիմնականում նշել են, որ պետք է խորացնել մասնագիտական և բազմակողմանի գիտելիքները, դարձնել այն կայուն և հիմնավոր, բարձրացնել գործնական հմտությունների մակարդակը և այլն:

Հարկ է նշել, որ արտաքին շահակիցները գնահատում են նաև մասնաճյուղի շրջանավարտների մի շարք առավելությունները. գիտելիքների հարուստ բազան, կարգապահությունը, համեստությունը, հայրենասիրությունը, կազմակերպչական կարողությունները, էթիկայի նորմերի բարձր վիճակը, չափորոշիչներին իրազեկ լինելը, պատասխանատվությունը և այլն: